

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1930 հունվար 14 Ծնվեց հայ տաղանդավոր կոմպոզիտոր Էդգար Յովհաննիսյանը:

մարտ 1 Սկսում է աշխատել Սարդարապատի մեքենատրակտորային կայանը՝ առաջինը խորհրդային Հայաստանում:

մարտ 16 Վառլան Ավանեսովի մահը Դիլիջանում:

մայիս 2 Տեղի է ունենում Քանաքեռզեխի հանդիսավոր հիմնադրումը:

մայիս 8 խորհրդային գաղտնի ոստիկանության կողմից սպանվեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը (Սուրենյանց):

հուլիս 4 Ծնվեց հայ դերասան Միեր Սկրտչյանը: (Վախճ. 1993թ.-ին):

հուլիս 25 ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը որոշում է ընդունում ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում մտցնելու մասին:

օգոստոս 5 ՀԽՍՀ Կենտգործկոմը և ժողկոմխորհուրդը որոշում են ընդունում ՀԽՍՀ զավառները վերացնելու մասին և Հայաստանի հանրապետությունը բաժանվեց 25 շրջանի:

սեպտեմբեր 25 Երևանում լույս է տեսնում քրդական «Ռյա թազա» թերթի առաջին համարը:

նոյեմբեր 1 ՀԽՍՀ ժողկոմխորհուրդը որոշում է ընդունում ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը վերակառուցելու և այն գիտությունների ինստիտուտ վերանվանելու մասին:

նոյեմբեր 21 Երևանում տեղի է ունենում կուսակցական ակտիվի հանրապետական միաստ, որտեղ Ս. Մ. Կիրովը զեկուցում է ներկուսակցական դրության

նոյեմբեր 29 Տեղի է ունենում Փոքր Սարդարապատի ջրանցքի բացումը:

1931 հունվար 8 Երևանում բացվում է աշխարհում միակ քրդական մանկավարժական տեխնիկումը:

փետրվար 24 Երևանում վախճանվեց ազգագրագետ Երվանդ Լալայանը: (Ծնվ. 1864թ.-ին):

նոյեմբեր 29 Տեղի է ունենում Մեղրու շրջանի Կարճևանի ջրանցքի հանդիսավոր բացումը:

1932 հունվար 23 Երևանում տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական համալսարանի հանդիսավոր բացումը:

փետրվար 23 Երևանում լույս է տեսնում Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի օրգան «Գրական թերթ»-ի առաջին համարը:

ապրիլ 9 Կազմակերպվում են

Հայաստանի խորհրդային գրողների միությունը, խորհրդային Հայաստանի երաժիշտների միությունը խորհրդային նկարիչների ու կերպարվեստի աշխատողների միությունը և խորհրդային ճարտարապետների միությունը:

ապրիլ 19 ՀԽՍՀ Կենտգործկոմի որոշմամբ վերակառուցվում է ՀԽՍՀ ժողտնտխորհը, որի բազայի վրա ստեղծվում են ՀԽՍՀ ծանր արդյունաբերության, թեթև արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատներ:

հունիս 10 Կահիրեում վախճանվեց տաղանդավոր դերասանուհի Սիրանույշը (Մերովբե Քանթարջյանի): (Ծնվ. 1857թ.-ին):

հունիս 25 Տեղի է ունենում Երևանի Ստալինի անվան ջրանցքի առաջին հերթի հանդիսավոր բացումը:

նոյեմբեր 5 Տեղի է ունենում Երևանի երկրորդ հիդրոկայանի հանդիսավոր բացումը:

նոյեմբեր 7 Տեղի է ունենում Մինջևան-Ղափան երկաթուղու բացումը:

նոյեմբեր 14 Երևանում վախճանվեց ականավոր պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյանի): (Ծնվ. 1860թ.-ին, Շուշիում):

նոյեմբեր 15 Տեղի է ունենում Ձորագետի հանդիսավոր բացումը:

1933 հունվար 12 Գործարկվում է Երևանի տրամվայը:

հունվար 20 Բացվեց Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը:

հունվար 30 Շահագործման է հանձնվում Երևանի ծխախոտի նոր ֆաբրիկան:

հունիս 3 ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշում է ընդունում պետական հուշարձանների պահպանության կոմիտե հիմնելու մասին:

հուլիս 12 Թիֆլիսում վախճանվեց գրող Նար-Դոսը (Միքայել Յովհաննիսյան): (Ծնվ. 1867թ.-ին):

հուլիս 14 Մոսկվայում մահացավ հայտնի հեղափոխական Իսահակ Լալայանը: (Ծնվ. 1870թ.-ին):

հոկտեմբեր 3 Երևանում բացվում է բուսաբանության գիտա-հետազոտական ինստիտուտը:

նոյեմբեր 29 Տեղի է ունենում Կիրովականի քիմիական կոմբինատի և Դավալուի ցեմենտի գործարանի բացումը:

նոյեմբեր 30 Լրիվ կարողությամբ շարք է մտնում Ձորագետը:

(Շարունակելի)



«Ությակը» հանդես է գալիս ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման սկզբունքների շուտափուլյթ համաձայնեցման օգտին

ՄՏԲԵԼԼԱ, 17 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ութի խումբը» պաշտպանում է Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադրության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի (Ռուսաստան, Ֆրանսիա, ԱՄՆ) համանախագահների կողմից գործադրվող ջանքերը: Այդ մասին, ինչպես հաղորդել է «Ինտերֆաքս» գործակալությունը, ասված է «մեծ ությակը» նախագահող Ռուսաստանի հայտարարության մեջ:

«Ությակի» անդամ երկրներն ընդգծել են արդեն այս տարի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնական սկզբունքների շուտափուլյթ համաձայնեցման անհրաժեշտությունը:

«Մենք կոչ ենք անում Ադրբեջանին եւ Հայաստանին՝ ցուցաբերել քաղաքական կամք, հասնել համաձայության եւ իրենց ժողովուրդներին պատրաստել ոչ թե պատերազմի, այլ խաղաղության», - ասված է «ությակի» նախագահի հայտարարության մեջ:

Փաստաթղթում նաեւ ընդգծվում է, որ «ությակի» ղեկավարները լիովին հավանություն են տվել «ութի խմբի» արտաքին գործերի նախարարների հանդիպման արդյունքներին եւ նրանց պատրաստած հանձնարարականներին:

Բրազիլիայի Սեարա նահանգի խորհրդարանի կողմից ապրիլի 24-ը սահմանվել է որպես «Հայ ժողովրդի օր»

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Սեարա նահանգի Օրենսդիր ժողովն ընդունել է նահանգապետ Լուիզիանա դե Օլիվեյրան վավերացրել է թիվ 8988 օրենքը, որով նշված նահանգի ողջ տարածքում յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ը սահմանվում է որպես «Հայ ժողովրդի օր»:

Այդ օրը հարգանքի տուրք կմատուցվի Օսմանյան Թուրքիայում Ցեղասպանության ժամանակ նահատակված 1,5 միլիոն հայերի հիշատակին: Ինչպես «Արմենարես»-ին տեղեկացրին ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, օրենքի նախագծի հեղինակն է «ՊՐՈՆԱ» կուսակցության պատգամավոր ժոան Բատիստա դա Սիլվան: Այն ընդունվել է Օրենսդիր ժողովի անդամների միաձայն քվեարկությամբ:

Սան Պաուլոյից հետո Սեարան բրազիլական երկրորդ նահանգն է, որն օրենսդրորեն ճանաչում է Հայոց ցեղասպանության փաստը: Սեարան Բրազիլիայի հյուսիսարեւելյան ամենագարգացած նահանգներից մեկն է: Նրա մայրաքաղաք Ֆորտալեզան իր բնակչության թվով չորրորդն է երկրում, այնտեղ գործում է փոքրաթիվ, սակայն լավ կազմակերպված հայկական համայնք:

ՄԱՐԿ ԱՐՅԱՆ. ԵՐԳԻ ՎԵՐԱԴԱՐՁՆ ԵՐԿԱՐ ՄՂՁԱՎԱՆՁԻՑ ՀԵՏՈ



Վերջին շրջանում ռադիոյով վերականգնվել ու հաղորդվում են անցյալ դարի 60-80-ական թվականներին Բելգիայում ստեղծագործած էստրադային երգիչ Մարկ Արյանի՝ նույն ինքը Հարություն-Անրի Մարգարյանի (1935-1985 թ.թ.) երգերը, լրատվամիջոցները որոշ տեղեկություններ են տալիս նրա մասին, մի երգչի, որի կենդանության օրոք վատաբարո մարդիկ նրա անվանը հյուսեցին բազում հեյոլուրանքներ ու զրպարտանքներ, որը եւ գուցե պատճառ դարձավ նրա վաղաժամ մահվան. ու սիրտը դադարեց բաբախելուց 50 տարեկանում:

Ժողովուրդն ասում է՝ նախաքը ջվալում չես պահի երկար: Բայց մեր անարգ լռությունը այդ նախաքը պահեց երկար. սկսած 1968 թվականից մինչեւ վերջերս, մի երկար ժամանակահատված, երբ չար ուժերը ջնջեցին Մարկ Արյանին. կարծես չի եղել մարդը, չի եղել երգիչը:

...1968 թվականի աշնանային այդ օրը շատ լուսավոր էր, երբ Մոսկվայից ժամանող ինքնաթիռը երեւան բերեց Մարկ Արյանին: Օդանավում շատ ուղեւորների մեջ էր աշխարհահռչակ գիտնական, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, որին էլ ինքնաթիռում ներկայացրել էին Մարկ Արյանին, եւ նույն օրը հյուրանոցում տողերիս հեղինակին Մարկ Արյանը՝ Ֆրանսիայում ծնված ու մեծացած երիտասարդը, որը բեյրութի ծնողների գավակ է, մաքուր արեւմտահայերենով ասում էր. «Իմ կյանքի մեծագույն, երջանիկ պահն էր մեծ գիտնականի հետ

ծանոթանալը: Աստծո կամոք էր, որ ես այդ օդանավն ընկա եւ ոչ թե՛ մեկ ուրիշը»:

Մենք՝ դիմավորող լրագրողներս օդանավակայանում գրեթե չչփվեցինք նրա հետ. «շրջապատը» թույլ չտվեց, «Արմենիա» հյուրանոցում էլ, ուր նա իջեւանել էր, դարձյալ նույն «շրջապատն» էր, բայց մինչեւ հիմա էլ չեմ կարողանում հասկանալ, թե այդ ինչպես եղավ, որ լրագրողներից միակը հայտնվեցի պինդ փակված դռնից ներս ու հապճեպ հարցազրույց վարեցի:

Հարցերիս պատասխանեց ուրախությամբ, ժպտալով, սիրով, առանց հաշվի առնելու, որ իր հետ եկել են եղբայրը, քույրը, մայրը, եւ նրանք հոգնած են:

Այն ժամանակ մեր ժուռնալիստական «զենքը» ծոցատետրն ու գրիչն էին: Ու գրույցի ժամանակ մի գրիչ ընծայեց ինձ, որի վրա գրված էր լատիներեն՝ «Մարկ Արյան»: Ուրախ նվեր էր. հիշենք, այդ տարիներին գրիչ էլ չունեինք, որովհետեւ միայն ծանր-ծանր հաստոցներ արտադրելով էինք զբաղված:

Բայց ես ձայնասկավառակներ էի ուզում նվեր ստանալ: Գուցե եւ դրանք հասցնել ռադիո, մինչեւ նվագելը... Այդպես հետագայում ես տարբեր առիթներով ռադիո եմ հասցրել հարավսլավացի երգչուհի Ռադմիլա Կարակլայիչի եւ ֆրանսիացի Սալվատորե Ադամոյի դեռ չնվագված ձայնասկավառակներն ու ձայներիզները, բազում շնորհակալություններ ստանալով ռադիոյից:

Մարկ Արյանն ինձ ընծայեց երեք ձայնասկավառակ: Մեկի վրա «LA CHANSON DU AVEUGLE» եւ «LE CLOCHER» երգերն էին, մյուսի վրա՝ «PARCE QUE T, AIME» եւ «ANGELINA», երրորդի վրա «MA PETITE CHANSON» եւ «VOLA-GE...VOLAGE...» երգերը: Դժբախտաբար, վերջինը կորցրել եմ, պահպանվել է միայն նրա շապիկը, որի վրա Մարկ Արյանը մակագրել է. «Վանիկին, Մարկ Արյան»: Մակագրություն է արել նաեւ «Անջելինա» երգի ձայնասկավառակի վրա՝ «Իմ բարեկամ Վանիկին, Մարկ Արյան» եւ մի լուսանկարի վրա՝ «Իմ լավ բարեկամ Վանիկին»: Տեսնու՞մ եք. ընծայագրերն աստիճանաբար «տաքացել» էին: Լուսանկարը տվել է ոչ թե հյուրանոցում, այլ «Դիմամո» մարզասրահում, համերգի ընդմիջման ժամանակ:

Մարկ Արյանը, իրոք, մեծություն է: Ես հիշում եմ, թե ինչպիսի հրաշալի հոդված գրեց «Սովետական արվեստ» ամսագրում հայտնի երաժշտագետ, հանգուցյալ Ցիցիլիա Բրուտյանը: Անդրադառնալով Ազնավուրի ու Մարկ Արյանի արվեստին, Բրուտյանը համեմատություն չարեց բոլորովին, պարզապես իրավամբ նշեց, որ եթե Ազնավուրի երգերը գալիս

են Սայաթ-Նովայի արմատներից, ապա Մարկ Արյանինը՝ Կոմիտասի ակունքներում են:

Այո, Մարկ Արյանի երգերում իշխում են քնարականությունը, հուզումնալից աշխարհը. այդ երգերը շոնդալից չեն, մեղմ են ու սիրտ շոյող:

Երգիչն ասաց, որ երգելուց բացի եկել է հայրենիքը տեսնելու, մանավանդ, որ առաջին այցելությունն էր, պիտի հաջորդեին նաեւ հետագա այցելությունները, եւ որ Երեւանը տոնում էր իր հիմնադրման 2750-ամյակը: Մարկն էլ մասնակցեց այդ հանդիսություններին, ուրախությամբ ելույթ ունենալով եւ Հանրապետական մարզադաշտում, եւ հեռուստատեսությամբ:

Սակայն մարդու՝ հայրենի հողին ոտք դնելուց սկսած ծավալվեցին չարախոսությունները: Նախ մեղմը՝ ո՞վ է նա Ազնավուրի կողքին: Անհիմն համեմատություն, որովհետեւ նրանք բոլորովին տարբեր էին եւ որպես անձնավորություններ, եւ որպես արվեստագետներ: Այդ հիմա է, որ ով ասես, կգա, սրահը կվարձի, կերգի: Այն ժամանակ այդպես չէր:

Տեսնեիք, թե ինչպիսի հաստագլուխներ էին նստած լրատվամիջոցներում: Առաջինը հենց նրանք տարածեցին «դիտմամբ չես հորինի», ինչպես կասեր Մոսկվայի «Կրոկոդիլ» հանդեսը, զրպարտանքները: «Եղբորը վնդդել են Հայաստանից, որովհետեւ գորգի առետրով է զբաղվել», «Էն գլխինը իր մագերը չեն, պարիկ է»: «Ինչո՞ւ է Ստամբուլի մասին երգ գրել, Երեւանի մասին՝ ոչ»: «Ինչու՞ է երգել Ստամբուլում, մեր թշնամի թուրքի քաղաքում»: Դե, հիմա եկեք ու այդ մարդկանց հարց տվեք՝ «Երեւանի օպերային թատրոնի բալետի խումբը ինչու՞ է պարել Ստամբուլում», «Քանի՞ առետրական ու մարմնավաճառ ունենք Ստամբուլում»... Գնալուց հետո էլ ասեկոսեներին վերջ չկար. «Թուրք կին է առել», «Թուրքահպատակ է դարձել» եւ այլն, եւ այլն:

Մարկ Արյանն այլեւս չեկավ հայրենիք, որովհետեւ նրա՝ հայրենիքից մեկնելուց հետո էլ երկար տարիներ շարունակ չէին դադարում նրա հասցեին բամբասանքները եւ հայրենիքում, եւ սփյուռքում: Շուտով եկավ նաեւ նրա երգերը ռադիոյով հաղորդելու արգելքը:

Ու Մարկ Արյանին ջնջեցին Հայաստան երկրի երեսից:

Բայց մախաթը ջվալում չմնաց, ծակեց, դուրս եկավ: Անցած գարնան ինձ մոտ եկավ իմ նախկին ուսանողուհի, «Հայլուրի» տաղանդավոր լրագրող Սուսան Բադալյանը ու խնդրեց պատմել Մարկ

Արյանի մասին: Ես սիրով, ուրախությամբ կատարեցի նրա խնդրանքը, եւ Սուսանը Մարկ Արյանի մասին մի լավ հաղորդում պատրաստեց, որը եւ հաղորդվեց:


Իսկ 1969 թվականին, երբ իրերի բերումով Բեյրութում էի, ես իմ խորհրդային մարդուն տրված սուղ միջոցներով ոչ թե «ջինս» գնեցի, այլ Մարկ Արյանի ձայնասկավառակը, որի վրա գրված են նրա երկու երգերը՝ «UN PETIT MARI» եւ «MERCİ»: Այն, ինչպես նաեւ նախորդ հիշատակածս ձայնասկավառակները, սրբությամբ պահում եմ մինչեւ այժմ:

Մարկ Արյանը վերադառնում է:

Հարգանք իր անվանն ու հիշատակին...

ՎԱՆԿ ՍԱՆԹՐՅԱՆ,

«Արմենպրեսի» մշակութային հարցերով լրագրող



Հաղորդագրություն

Ստորեւ ի գիտություն հանրության՝ ներկայացնում ենք 1999-ից առ դեկտեմբեր 2005-ը թեհրանում տեղի ունեցած մկրտությունների, ամուսնությունների, ապահարզանների եւ մահերի պատկերը:

1999	2000	2001	2002	2003	2004	2005
Մկրտություն	562	1067	337	297	282	278
Պսակ	393	350	266	235	261	250
Ապահարզան	31	27	27	31	41	28
Մահ	495	35	529	480	522	462
			545			

ԴԻԲԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՂԵՂՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՎՈՅ ՆԵՐՔԻՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ ԵՎ ԶԱՅՆ ԽՈՐԱՋՆՈՂ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԸ

«Ձարթօնք» օրաթերթի 29 մարտ 2006 թիվին մէջ կարդացինք Կիլիկիոյ կաթողիկոսութեան միջեկեղեցական յարաբերութիւններու վարիչ Տ. Նարեկ եպս. Ալեքնէզեանի հետ կայացած հարցազրոյցը «Հասկ» ամսագրի համար: Նիւթն է 14-23 փետրուար 2006-ին Բրազիլի Փորթօ Ալեգրէ քաղաքին մէջ գումարուած Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի (ԵՀԽ) 9-րդ համաժողովին Հայաստանեայց եկեղեցւոյ մասնակցութիւնը:

Տրուած տեղեկութիւններուն համաձայն, ժողովին մասնակցած են 691 պատգամաւորներ՝ ներկայացնելով յիշեալ խորհուրդի անդամ 348 եկեղեցիները, որոնցմէ երկուքն է Հայց. եկեղեցին: Այո՛, երկուքը, քանի որ 1956-ի եկեղեցական պառակտումը ազգային շրջանակներէն քաշքշուեցաւ մինչեւ օտար եկեղեցական թատերաբեմ եւ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ներկայացաւ աշխարհին որպէս առանձին եկեղեցի եւ այդ արտառոց ընթացքին մէջ կը յամենայ տակաւին, անընդհատ կրկնելով «Մէկ ազգ, մէկ եկեղեցի» յանկերգը:

Իսկ Նարեկ Սրբազան, որ ի պաշտօնէ համաշխարհային հրապարակի վրայ ձայնն է Կիլիկիոյ կաթողիկոսութեան, շատ զոհ կը թուի ըլլալ այս կացութենէն: Ահա՛ իր կարծիքը Կիլիկիոյ կաթողիկոսութեան «անջատաբար» ԵՀԽ-ի մասնակցութեան մասին: Անցողակի յիշելէ ետք «ոմանց կողմէ ժխտական» մեկնաբանութիւնները այս մասին, Սրբազանը կ'ըսէ. «Տրամաբանական մօտեցում ունեցող հայը այս երեւոյթը դրական ու օգտակար պիտի նկատէ Հայ եկեղեցւոյ համար: Երկու առանձին պատուիրակութիւններով մասնակցութիւնը ո՛չ միայն թուական հզօրութիւն կ'ապահովէ եւ կացութիւններու նկատմամբ ճկունութեան կարելիութիւն կ'ընձեռէ, այլ նաեւ մեր ժողովուրդը յուզող հարցերուն նկատմամբ միացեալ կեցուածք ունենալու կարելիութիւն կ'ընձայէ, պայմանաւ սակայն, որ գիտնանք ո՛ր գործակցիլ եւ մէկ ձայնով հրապարակ գալ եւ ո՛ր անհրաժեշտութեան պարագային տարբեր մօտեցումներ ունենալ»:

Որպէս հայ եւ Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակ նման «տրամաբանութեամբ» մը զինուելէ եւ զրահուելէ ետք՝ խորապէս ամիսոսացի, որ բաւարարուեր ենք միայն եկու աթոռներու պատուիրակութիւններով եւ պահ մը երեւակայեցի բազմապատկումը այն բոլոր

բարիքներուն_հօգուրթեան ապահովում, կացութիւններու նկատմամբ ճկունութիւն, միացեալ կեցուածք ունենալու կարելիութիւն_եթէ չորս կամ աւելի առանձին պատուիրակութիւններով գացած ըլլայինք համագումարին: Երանի՛ խափանուած չըլլային Աղթամարի եւ Ադուանից կաթողիկոսութիւնները:

Իսկ Սրբազանին կողմէ յիշուած բոլոր սքանչելի կարելիութիւններն անշուշտ կախեալ են «պայմանաւ»-էն, որ ընթերցողը անորոշութեան կրնայ մատնել: Ուրեմն կան ատեններ եւ պարագաներ, երբ չենք գիտեր «գործակցիլ եւ մէկ ձայնով հրապարակ գալ»: Եթէ այդ վտանգը կայ, ինչո՞ւ «անջատաբար» կը գործենք եւ ապա երազային գործակցութեան մը կը ձգտինք: Եւ ի՞նչ կը նշանակէ «անհրաժեշտութեան պարագային տարբեր մօտեցումներ ունենալ»: Նախ եւ առաջ՝ ո՞վ կ'որոշէ պարագայի մը անհրաժեշտ ըլլալը կամ չըլլալը: Երկրորդ՝ անհրաժեշտութեան մը պարագային միշտ աւելի իմաստուն պիտի չըլլա՞յ եկեղեցւոյ, հայրենիքին եւ ազգին գերագոյն շահերը բիւրեղացնել, որպէսզի տարբեր մօտեցումները այդ շահերէն բխին: Երկու «անջատաբար» գործող պատգամաւորութեամբ ինչպէ՞ս կարելի է իրագործել ասիկա: «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր աւերի. եւ ամենայն քաղաք եւ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ» (Մատթ. ԺԲ. 25):

Սրբազանին հաստատումներէն մէկն ալ այն է, թէ «մեր երկու պատուիրակութիւններուն միջեւ սիրալիր յարաբերութիւն ու գործակցութիւն կար, սակայն աւելին ըլլալու ակնկալութիւնը ունինք միշտ»: Եթէ մէկ ազգ եւ մէկ եկեղեցի ենք, մեզի հետ «սիրալիր յարաբերութիւն ու գործակցութիւն» ունենալը ինչպէ՞ս կ'ըլլայ: Եթէ ակնկալութիւն մը կայ, այդ ալ պէտք է ըլլայ վերջ տալ երկփեղկումին, որ ստեղծուեցաւ 1956 թուականին եւ այսօր կէս դարէ ի վեր կը գոյատեւէ ի վնաս մեր ժողովուրդին:

Սրբազանին հարցազրոյցին մէջ նկատելի է ուրիշ յատկանշական երեւոյթ մը, որ այս վերջերս կիլիկեան այլ միաբաններու եւ աշխարհականներու գրութիւններուն եւ խօսքերուն մէջ կարելի է նշմարել: Ամէն անգամ, երբ Կիլիկիոյ աթոռին մասին է խօսքը՝ «աթոռ» բառին որպէս ստորոգելի կը գործածուի «սուրբ» ածականը: Նարեկ Սրբազանի հարցազրոյցին մէջ երեք կամ չորս անգամ գործածուած է «մեր Ս. Աթոռը» բացատրութիւնը, իսկ տեղ մըն ալ՝ ակնարկելով Ս. Էջմիածնի եւ Կիլիկիոյ կաթողիկոսութիւններուն՝ «մեր երկու Ս. Աթոռները» կ'ըսուի_այսինքն՝ երկու անջատաբար սրբութեամբ պարուրուած «հաւասարազօր» աթոռներ_ականջը խօսի Միմաս Թէլէլէտեանին: Հայ ժողովուրդը իր հայրապետութեան կեդրոնը կը ճանչնայ որպէս «Մայր Աթոռ»: «Հայրապետական

մաղթանք»-ի բնագրին մէջ, զոր բարեկամ հոգեւորական մը տրամադրեց, մէկ անգամ իսկ Ս. Էջմիածինը չէ կոչուած Ս. Աթոռ, այլ «Մեծ Աթոռ» կամ «Մայր Աթոռ»:

Ստոյգ է, որ Կիլիկիոյ հին կաթողիկոսներէն եւ եպիսկոպոսներէն մի քանին իրենց գրութիւններուն մէջ գործածած են «սուրբ» մակդիրը Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռին համար, բայց ասիկա ըրած են հազուադէպ առիթներով: Իսկ անթիլիասական մերօրեայ «հաւասարազօր» ամուլները առիթ չեն փախցնէր սրբութեան տիտղոսով զարդարելու «մեր» աթոռը: Իսկ Ս. Էջմիածինը եւս «Ս. Աթոռ» կոչելով՝ կ'երեւի թէ զրկած ըլլալ կը կարծեն զայն Մայր Աթոռ ըլլալու հանգամանքէն, որպէսզի «հաւասարազօր» կաթողիկոսութեան բորբոսած հակակամոնական բանաձեւը արմատացնեն մտքերու մէջ:

Նարեկ Սրբազանի հարցազրոյցէն այն տպաւորութիւնը կը ստացուի, թէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատուիրակութիւնը, որուն անդամ է ինք տասներեք այլ անձերու հետ, մեծ իրագործումներ կատարուած են համագումարին ընթացքին: Իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատուիրակութեան իրագործումներուն մասին նուազագոյն տեղեկութիւն տրուած է: Նոյնիսկ չէ յիշուած, թէ այդ պատուիրակութիւնը քանի հոգիէ բաղկացեալ էր: Իրողութիւնը այն է, որ Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւս մեծ պատուիրակութեամբ (տասնչորս հոգի) մասնակցած էր համագումարին: Անշուշտ Նարեկ Սրբազան կ'ըսէ, թէ Կիլիկիոյ պատգամաւորութեան գործունէութեան մասին միայն պիտի արտայայտուի: Բայց եւ այնպէս, երբ կը յայտարարէ, թէ «մեր երկու պատուիրակութիւններուն միջեւ սիրալիր յարաբերութիւն ու գործակցութիւն կար», պարտաւոր էր ընթերցողներուս տեղեկացնելու, թէ այդ «սիրալիր յարաբերութիւն»-ը եւ «գործակցութիւն»-ը ինչ մարզերու մէջ էր եւ անոր շնորհիւ ինչ բաներ իրագործուեցան յօգուտ մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդին:

Վերջերս հայրենիք այցելութեանս օրերուն առիթ ունեցայ համագումարին մասին կարգ մը տեղեկութիւններ քաղելու Ամենայն հայոց կաթողիկոսութեան պատուիրակութեան մասնակցող աշխարհական կարգ մը անդամներէն: «Սիրալիր յարաբերութենէ եւ գործակցութենէ» փարսախներով հեռու, տարբեր եւ տխուր պատկեր մը ներկայացուցին անոնք Կիլիկիոյ պատուիրակութեան «քաջագործութիւններուն» մասին: Նարեկ Սրբազան եւ իր ընկերները ընտրողական յանձնախումբին մէջ ճնշում բանեցնելով՝ ամէն աշխատանք տարած են նսեմացնելու Մայր աթոռի պատուիրակութիւնը, ջանալով խափանել անոր անդամներուն մոտքը

բարձրագոյն վարչական ժողովներէն ներս: Ասիկա բացէ ի բաց անարգանք է հայ ազգին, հայրենաբնակ մեր ժողովուրդին եւ մանաւանդ Մայր հայրենիքին, ուր կը գտնուի աշխարհասփիւռ Յայաստանեայց եկեղեցւոյ կեդրոնատեղին: Իրողութիւնը այն է, որ միայն Մայր աթոռի պատուիրակութեան ծանր բողոքներուն վրայ առիթ տրուած է, որպէսզի պատուիրակութեան անդամներէն ոմանց անունները դրուին ընտրացանկերուն վրայ եւ արդիւնքը այն եղած է, որ անոնք ընտրուին որպէս անդամ բարձրագոյն վարչական մարմիններուն՝ ներկայացնելու համար Յայց. եկեղեցին եւ Մայր աթոռը:

Ի՞նչ իմաստութիւն կրնայ ըլլալ այսպիսի «մրցակցութեան» մէջ, երբ մեր Սուրբ եկեղեցին համաշխարհային եկեղեցական շրջանակներէ ներս կը ներկայանայ երկփեղկեալ ճակատով: Ի՞նչ շահ կրնանք ապահովել մեր եկեղեցւոյն, մեր ժողովուրդին եւ մայր հայրենիքին, երբ ամբողջ աշխարհի առջեւ օր ցերեկով Անթիլիաս առիթ չի փախցներ իր հաւասարագօր կաթողիկոսութեան սին ձգտումներով եւ երազներով ճաթտութեան յառաջացնելու Յայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետական կառոյցին մէջ: Մի՞թէ պատմութիւնը դարձեալ եւ դարձեալ չէ փաստած, որ Յայց. եկեղեցւոյ աստուածակառոյց նուիրապետութիւնը անսասան է, իսկ օտար երկրի մը ծովափնեայ աւազներուն վրայ հիմնուածը՝ ժամանակաւոր եւ միշտ ենթակայ փլուզումի:

Որպէս հետեւանք ազգին մէջ ազգ եւ եկեղեցիին մէջ եկեղեցի դառնալու անջատողական ձգտումներու, Անթիլիաս վերջերս նոր թափով մը սկսած է փետրագարդել ինքզինք որպէս «հայ ուղղափառ եկեղեցւոյ կեդրոնավայր» եւ «սուրբ վայր», իսկ իր գահակալը ներկայացնել որպէս «առաքելական առաջնորդ» եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի «հետմորդ»: Այս ամէնը ո՞ր պիտի առաջնորդեն մեզ, մանաւանդ այսօր, երբ ցրուած ենք աշխարհի չորս ծագերուն եւ մեր ժողովուրդը պէտք ունի զինք միաւորող առաջնորդներու եւ միասնականութեան առաջնորդող հաստատութիւններու: Անջատողական ոգիով ի՞նչպէս պիտի կարենանք մեր եւ մեր հայրենիքին դէմ ծառացող բազում դժուարութիւնները դիմագրաւել, խութերը եւ խոչընդոտները հարթել, ուժացման եւ մեր զաւակները մեզմէ խլող աղանդաւորական եւ այլ տեսակի վնասակար քաղաքական եւ ընկերային շարժումներուն առաջքը առնել: Ասիկա ժամանակը չէ միջնադարեան վէճեր յարուցանելու, հինէն եկած եկեղեցւոյ նուիրապետական կարգը փոփոխութեան ենթարկելու: Մեր բոլոր աթոռներն ալ այդ կարգին մէջ ունին իրենց հաստատուն եւ յարգելի տեղը: Մէկուն նսեմացումը եւ միւսին բարձրացումը միայն կրնայ կազ ու կռիւ ստեղծել եւ յաչս ժողովուրդին նսեմացնել բովանդակ եկեղեցին եւ հոգեւորականութիւնը: Կես դարէ ի վեր նման վէճեր

միայն ծառայած են մէկ բանի՝ պարպելու ժողովուրդը իր զգացումներէն հանդէպ ազգին եւ ազգային եկեղեցւոյ: Այսօր ազատ եւ անկախ հայրենիքի իրականութիւնը կը պարտադրէ, որ մէկ կողմ դնենք մեր տարակարծութիւնը եւ լծուինք հայրենիքի շինութեան եւ ազգային եկեղեցւոյ բարեգարդութեան: Այդ գոյգ նպատակներուն եթէ իրապէս կը հաւատանք, պէտք է համոզուինք, որ հատուածական կամ կողմնակի շահերու հետապնդումը միայն վնաս կրնան հասցնել:

3. ԹՈՐՈՍՅԱԼ

Ետախույզներ

ՄԵՐ ՍԱՐԴԸ ԹԵՅՐԱՆՈՒՄ

82-ամյա Գեւորգ Վարդանյանը խորհրդային նշանավոր հետախույզ է: Նա մեկն է այն անձանցից, ում ջանքերով 1943 թ. Թեհրանում կանխվեց Ստալինի, Ռուզվելտի եւ Չերչիլի սպանությունը: Ծնվել է Դոնի Ռոստովում, իրանահպատակի ընտանիքում: 1930-ական թթ. ընտանյոք Իրան է մեկնել մշտական բնակության: 1940-ական թթ. Վարդանյանն այնտեղ հետախուզական ցանց է ստեղծել: 1946 թ. մայիսին՝ 5 տարվա ներկայությունից հետո խորհրդային զորքերը դուրս բերվեցին Յուսիսային Իրանից: Բայց Վարդանյանն Իրանում մնաց մինչեւ 1951 թ., ապա աշխատեց Արեւմտյան Եվրոպայում: Արտերկրում գրեթէ կես դար տեւած հետախուզական աշխատանքի համար Գեւորգ Վարդանյանն արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման, որը հետախուզության պատմության մեջ երկրորդն է Նիկոլայ Կուզնեցովից հետո: Գեւորգ Վարդանյանի կինը՝ տիկին Գոհարը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Մոսկովյան «Վրեմյա նովոստեյ» թերթը նշում է, որ մինչեւ օրս երկուսն էլ աշխատում են եւ իրենց փորձը փոխանցում երիտասարդ գործընկերներին: Թերթին Գեւորգ Վարդանյանի տված ծավալուն հարցազրույցը թարգմանաբար ներկայացնում ենք որոշ կրճատումներով:

- *Ինչպե՞ս սկսեցիք աշխատել հետախուզությունում:*

- Երբ 1930 թ. ընտանյոք տեղափոխվեցինք Թավրիզ, հայրս արդեն աշխատում էր խորհրդային հետախուզությունում: Երեխաներս իրանահպատակ էինք, հաճախում էինք տեղական դպրոցներ: Երբեմն հորս կարճ ժամանակով բանտարկում էին: Նման դեպքերում ռեզիդենտի հետ հանդիպման էր գնում մայրս իմ ուղեկցությամբ: Ինձ համար հանելուկ էր, թե հայրս որտեղից է հայթայթում խորհրդային թերթեր, ամսագրեր, գրքեր: Մենք տեղյակ էինք բոլոր իրադարձություններին:

1940 թ. փետրվարի 4-ին ես նույնպես բախտս կապեցի խորհրդային հետախուզության հետ: Այն ժամանակ 16 տարիս չէր լրացել: Արդեն 66 տարի աշխատում եմ այդ ասպարեզում:

- *Ինչպիսի՞ առաջադրանքներ էիք կատարում:*

- Իմ առաջին գործը համախոհների յոթ հոգանոց խմբի ստեղծումն էր: Խմբի բոլոր անդամները ԽՍՀՄ-ից արտաքսված կամ ինչ-ինչ պատճառներով հեռացած մարդիկ էին: 1940 թ. փետրվարից մենք սկսեցինք բացահայտել գերմանական գործակալներին: Մեկուկես տարում՝ մինչև 1941 թ. օգոստոսին խորհրդային զորքերի Իրան մտնելը, մենք բացահայտեցինք 400-ից ավելի իրանցի գործակալներ: Նրանց մեջ կային գեներալներ, գնդապետներ, շահի պալատական պաշտոնյաներ, նախարարներ, պատգամավորներ:

- *Անփորձ երիտասարդների համար նման գրադնունքը դժվար չէ՞ր:*

- Դժվար էր: Այդ ժամանակ Իրանում ֆաշիստների լրտեսապետն անչափ փորձված հետախույզ Ֆրանց Մայերն էր: Մինչ այդ աշխատել էր Մոսկվայում, մաքուր խոսում էր ռուսերեն եւ պարսկերեն: Ինքն էլ տեղացու տեսք ուներ: Յաճախ փոխում էր կերպարանքը, հագնվում մոլլայի պես: Երբեմն նրան կորցնում էինք տեսադաշտից, քանի որ մենք շարժվում էինք հեծանիվներով, իսկ ինքը՝ ավտոմեքենայով: Միայն 1942 թ. ունեցանք ռազմավարային գերմանական ավտոմեքենա եւ սկսեցինք լիարժեք հսկողություն իրականացնել:

- *ԽՍՀՄ-ին ի՞նչը դրդեց զորք մտցնել Յուսիսային Իրան:*

- Դեռ պատերազմից առաջ գերմանացիներն Իրանում պլացդարմ էին ստեղծել ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար: Գերմանիան այնտեղ ուներ հզոր լրտեսական ցանց: Իրանում կար 20 հազար գերմանացի: Նրանք խորհրդականներ էին բանակում, պետական մարմիններում, գործարաններում, կառուցում էին ռազմավարական ճանապարհներ: Դրանցից մեկը Պարսից ծոցից հասնում էր Կասպից ծով: ԽՍՀՄ-ը գրավելուց հետո գերմանական զորքերը պետք է Պարսից ծոցից շարժվեին դեպի Յնդկաստան: Մինչև 1941 թ. իշխած Ռզա շահը երկրում խրախուսում էր գերմանացիների գործունեությունը: Խորհրդային ներխուժումը նախահարձակում չէր: Մենք գործում էինք ՌԽՖՍՀ-ի եւ Իրանի 1921 թ. պայմանագրի համաձայն: Դրա 6-րդ հոդվածը թույլ էր տալիս Իրանից մեզ վտանգ սպառնալու դեպքում զորք մտցնել այնտեղ: Այդ անժամկետ պայմանագիրը տեսականորեն գործում է մինչ օրս:

- *Խորհրդային զորքերի ներկայությունը փոխե՞ց ձեր գործունեության բնույթը:*

- 1941 թ. մեր զորքերի գալուց հետո ձերբակալվեցին մեր բացահայտած բոլոր գերմանական գործակալները: Մի մասին հանձնեցինք անգլիացիներին, ոմանց էլ վերահավաքագրեցինք, եւ նրանք սկսեցին աշխատել մեզ համար: Ամենամոլի եւ ֆաշիստամետ

գործակալներին ուղարկեցինք ԽՍՀՄ: Ստալինգրադի մոտ մեր հաղթանակից հետո նրանք սկսեցին գործակցել մեզ հետ:

Ֆրանց Մայերը մեկուկես տարի անհետացել էր: Ի վերջո պարզեցինք, որ նա որպես գերեզմանափոր աշխատանքի է ընդունվել հայկական գերեզմանոցում: Ման էր գալիս փաթոցով, մորուքով, փնթի կերպարանքով: Յավաքել էր փախած գործակալներին եւ վերսկսել աշխատանքը: Պարզեցինք Մայերի նոր կապերը եւ Մոսկվայից նրան ձերբակալելու թույլտվություն խնդրեցինք: Մինչ կենտրոնը կպատասխաներ, անգլիացիները մեր աչքի առջեւ նրան ձերբակալեցին եւ տարան: Մենք ձերբակալեցինք Մայերի տեղակալներին եւ զինակիցներին, բայց նրան ձեռքից բաց թողնելն այնուամենայնիվ ցավալի էր:

- *Անգլիացիները ձեր մրցակիցնե՞րն էին:*

- Այո: Նրանք Իրանում ակտիվ էին: Թեեւ Մեծ Բրիտանիան մեր դաշնակիցն էր, բայց 1942 թ. Թեհրանում բացեց հետախուզական դպրոց, որտեղ ընդունում էին ռուսերենին տիրապետող երիտասարդների: Դա շատ ուժեղ դպրոց էր: Այնտեղ դասավանդում էին հետախուզական ամեն տեսակ հմտություններ: Նրանք վեց ամսում պատրաստում էին երկու հոգանոց խմբեր, որից հետո Յնդկաստանում սովորեցնում էին անկարգելով ցատկել, ապա իջեցնում ԽՍՀՄ կովկասյան եւ միջինասիական հանրապետությունների տարածքում: Պատկերացնո՞ւմ եք: Բրիտանացիները մինչև օրս էլ մնացել են այդպիսի սրիկաներ:

Ինձ հանձնարարվեց ընդունվել այդ դպրոց: Ստուգման ենթարկվեցի եւ ընդգրկվեցի ունկնդիրներ ցանկում: Միշտ ընդգծում եմ, որ երախտապարտ եմ անգլիական հետախուզությանը, որի շնորհիվ ձեռք բերեցի ամեն տեսակ հմտություններ եւ կյանքում ծախողում չկրեցի: Ես տեղեկություններ էի հաղորդում դպրոցի ունկնդիրների եւ շրջանավարտների մասին: Մեր հակահետախույզները որսում էին նրանց եւ վերահավաքագրում: Այնպես որ անգլիացիներն ստանում էին ապատեղեկատվություն:

Իմանալով, որ խորհրդային հետախույզները տեղյակ են գաղտնի դպրոցի գոյությանը, բրիտանացի լրտեսապետը մի խումբ գործակալների կարգադրեց ոչնչացնել դպրոցի թանկարժեք սարքավորումները, բայց մենք կանխեցինք նրանց եւ տիրացանք սարքավորումներին:

- *1943 թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը տեղի ունեցավ Թեհրանի կոնֆերանսը, որի հետ է կապված Ձեր կյանքի փայլուն դրվագներից մեկը: Դուք մեկն եք այն անձանցից, ում շնորհիվ*

կանխվեց հակահիտլերյան «եռյակի» դեկավարների սպանությունը:

- Մեր նշանավոր հետախույզ Նիկոլայ Կուզնեցովից տեղեկացանք, որ ֆաշիստները պատրաստվում են սպանել Ստալինին, Չերչիլին եւ Ռուզվելտին: Կուզնեցովն այն ժամանակ պարտիզան էր Բելոռուսիայում: Մի անգամ, երբ նա գերմանացիների թիկունքում էր, կարողացել էր մտերմանալ ֆաշիստ սպաներից մեկի հետ: Վերջինս բերանից թռցրել էր, որ գերմանացիները պատրաստվում են Իրանում դեսանտ իջեցնել ֆյուրերի սիրելի հետախույզ Օտտո Սկորցենիի գլխավորությամբ: Այդ նա էր 1943 թ. ամերիկյան գերությունից ազատել իտալացի ֆաշիստների առաջնորդ Բենիտո Մուսոլինիին: Մեր խմբին հանձնարարվեց գտնել այդ դեսանտը: Թեւ Մայերն արդեն ձերբակալված էր, բայց նրա գործակալներից շատերը մնում էին ազատության մեջ:

Մեր բախտը բերեց մենք առաջինը հայտնաբերեցինք դեսանտային խումբը: Վեց գերմանացիներ անկարգելներով իջան Ղոմի շրջանում՝ Թեհրանից 80 կմ հեռավորության վրա: Հետո պարզվեց, որ դա առաջին խումբն է: Դրա խնդիրն էր կապել Բեռլինի հետ եւ պայմաններ նախապատրաստել Սկորցենիի գլխավորությամբ հիմնական դեսանտի իջեցման համար: Երբ խմբի անդամները կապ հաստատեցին իրենց կենտրոնի հետ, մենք բրիտանացիների հետ ձերբակալեցինք նրանց: Խումբն սկսեց Բեռլինի հետ աշխատել մեր թելադրանքով, բայց հաջողեցրեց վտանգի ազդանշան հաղորդել: Ճիշտ է, մեզ համար դա եւս լավ էլք էր. գերմանացիները հասկացան, որ մենք պատրաստ ենք դիմավորելու իրենց: Եթե գերմանացիները հիմնական դեսանտ իջեցնեին, կարծում են, մենք կորուստներից զերծ չէինք մնա:

- *Գերմանացիներն ինչպե՞ս էին իրականացնելու մահափորձը:*

- Նրանք ուզում էին նոյեմբերի 30-ին՝ Չերչիլի ծննդյան օրը բրիտանական դեսպանատուն թափանցել աղբյուրի միջով: Այդ դրվագն առկա է «Թեհրան-43» ֆիլմում: Թեհրանում այն ժամանակ ջրնուղ չկար. բնակչությունը ջուր էր վերցնում առուններից: Բայց կար երկու աղբյուր. մեկը շահի պալատում էր, մյուսը՝ Մեծ Բրիտանիայի դեսպանատան տարածքում: Դեսպանատան աղբյուրը սկիզբ էր առնում հայկական գերեզմանատնից, որտեղից էլ գերմանացիները պատրաստվում էին թափանցել դեսպանատուն: Ապահովության նկատառումներով Ստալինը Ռուզվելտին առաջարկեց տեղափոխվել ԽՍՀՄ դեսպանատուն: Ամերիկյան դեսպանատունը քաղաքից դուրս էր եւ անապահով: Իսկ մեր դեսպանատան դիմացը՝ 15 մետրի վրա

բրիտանական դեսպանատունն էր: Պատերի մեջ անցք բացելով՝ մենք երկու շենքերը միացրինք բրեզենտե միջանցքներով, եւ Չերչիլը կարողանում էր հանգիստ անցնել մեր դեսպանատուն: Հիմնականում այնտեղ էլ անցկացվեց կոնֆերանսը, քանի որ Ռուզվելտը դժվարանում էր տեղաշարժել:

- *Որո՞նք են իրանցիների ազգային խառնվածքի առանձնահատկությունները:*

- Ես Իրանից մեկնեցի 55 տարի առաջ: Այդ տարիներին շատ փոփոխություններ են եղել: Բայց արեւելցու հոգեբանությունն ամենուրեք նույնն է. նա ասում է մի բան, մտածում ուրիշ բան եւ անում մի երրորդ բան: Նրանք բոլորը խոնարհվում են ուժի եւ փողի առջև: Բայց երբ նրանց գնում ես փողով, նրանք չեն դառնում նվիրված:

Ներկայումս խոսվում է Իրանի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողության հնարավորության մասին: Պատերազմը մեծ սխալ կլիներ: Իրանն Իրաք չէ: Ամերիկացիներին չի հաջողվի հեշտությամբ գրավել երկիրը: Իրանը տարածքով մեծ է, ունի ուժեղ բանակ եւ զենք: Բայց գլխավոր տարբերությունն այն է, որ Իրաքում չկար դիմադրություն, այնտեղ անչափ շատ էին դավաճանները: Իրանում ազգային ոգին ավելի ուժեղ է: Ամերիկացիները դա հասկանում են, ուստի հակված են ոչ թե ծավալուն գործողությունների, այլ նպատակային հարվածների:

Չի կարելի անտեսել նաեւ մոլեռանդությունը: Անցյալում Իրանը չունեւր նման կրոնական ուժ: Ծեր շահ Ռզա Փեհլեւին անխնա պայքարում էր կրոնի դեմ, մգկիթներում գնդակահարում մոլլաներին: Երբ մենք Իրան եկանք 1930-ին, բոլոր կանայք սեւ չադրա էին հագնում, նույնիսկ աչքերն էին ծածկում: 1936-ին ոստիկանությունն սկսեց չադրաները պոկել հենց փողոցներում: Թեհրանը դարձավ իսկական եվրոպական քաղաք, կանայք կարճ շրջագետս էին հագնում:

- *Այս ամենն իմանալով, անգլիացիները ըստ երեւույթին չեն շտապում պաշտպանել ԱՄՆ-ի հակաիրանական ռազմական ծրագրերը:*

- Անգլիացիներն այնտեղ սեփական շահեր ունեն: Այսօր իշխանության գլուխ անցած մոլլաներն անգլիացիների դրածոներն են: Նրանք մոլլաներին դաստիարակել եւ մշտապես աջակցել են ի հեճուկս ամերիկացիների: Վերջիններս Մոհամմադ Ռզա շահ Փեհլեւիի օրոք (1941-1979) անգլիացիներին վճռեցին Իրանում նրանց պատկանած նավթի բոլոր հանքավայրերից: Մեծ Բրիտանիան դա չմոռացավ եւ սկսեց սուսուփուս օգնել ընդհատակյա իսլամական առաջնորդներին, որոնք էլ 1979 թ. այաթոլլահ Խոմեյնիի գլխավորությամբ տապալեցին շահական վարչակարգը:

Պ. Ք